

կարողացաւ ստանալ ի նոցանէ ընդ ամենն 2124  
բուրլի 74 1/2 կոպէկ:

Սոյն գումարն արդէն ուղարկեալ լինելով ի կոն-  
սիստորիայն Հայոց Շամախոյ առ ի հարկաւորեալն  
անօրէնութիւն, «Արարած», պարտ կհամարի հրաւ  
տարակիչ ի ստորեւ նորա հաշիւն ի պետութիւն  
համայն ազգայնոց, հրաւէր կարդալով միանգամայն  
նոցա, որք տակաւին իւրեանց հաւարած փողերն չեն  
առարած ի գանձարանն Աթոռոյս, փութան հասու-  
ցանել ժամ յառաջ առ ի փակելոյ ղփիրջնական հա-  
շիւս ժողովարարութեան:

ՄՈՒՏՔ Ո՞ Կ՞

Ա. վիճակ Տփիսիսոյ.

1. Ի Փոխանորդէ Գանձակոյ . . .	434	63
2. Ի Փոխանորդէ Գօրոյ . . .	457	60
3. Ի Թեմ. ատենէ վրաստանի . . .	267	22

Բ. վիճակ Ղարապաղոյ.

4. Ի Հոգեւոր կառավարութենէ Նուխոյ	51	59
-----------------------------------	----	----

Գ. վիճակ Աստրախանայ.

5. Ի Թեմ. ատենէ Աստրախանայ . . .	490	51 1/2
6. Ի Փոխանորդէ Ղզարայ . . .	553	42

Դ. վիճակ Նախիջևանայ եւ Բեսարաբիոյ.

7. Ի Թեմ. ատենէ Բեսարաբիոյ . . .	433	48
8. Ի Փոխանորդէ վիճակաւորի Բեսա- րաբիոյ . . . . .	553	9

Ե. վիճակ Երևանայ.

9. Ի Փոխանորդէ Թեմակալի Երևանայ	49	70
Գումար	2124	74 1/2

ԵԼՔ.

1. Յանձնեցաւ վիճակաւորի Շամախոյ Անդրէաս Արքեպիսկոպոսի առ ի բաժա- նել ի վերայ ծառայողաց Կոնսիստորի- ային եւ այլոց, որք վնասեալ էին յերկ- րաշարժութենէ . . . . .	600
2. Առարեցաւ Թղթատարաւ ի Կոնսիս- տորիայն Շամախոյ . . . . .	4517 74 1/2
5. Եւախք փոշոի վասն յիշեալ գումարոյ	7

Գումար	2124 74 1/2
--------	-------------

Ծանօթ:— Վիճակաւորն Թեմին Շամախոյ առան-  
ձինն հաւարեալ է 157 բուրլի 2 կ. զգրս ի գործ

եղեալ է վասն ծախուց կարկառանաց Աւագ Եկեղե-  
ցոյ:

Ի Ս. Պ. ԲՈՒՐԳԷ.

Յունիս 1 ամսաթուով Հեռեւեալ գը-  
րութիւնը ի Ս. Պ. բուրգէ ուղղուած է  
խմբագրութեանս:

Ընթերցեալ յԱպրիլեան ամսատետրակին բարե-  
հոշակ Հանդիսագրութեան Հայրենասէր Արարա-  
տիզ գնամակ իմ ի 1 Ն Մարտի 1873 ամիս, ցա-  
ւօք օրտի տեսի զօխալանս իմ՝ որ էր պտուղ եօ-  
թանասուն և երկու ամեայ զառամութեանս, և  
պարտ անձին վարկայ միւսանգամ ձանձրոյթ  
պատճասել անձանձիր Ազգասիրութեան խմբագ-  
րութեանց յուղղել զայն իմ ակամայ վրիպակ:

Պ. Քեչէճեան Պետրոս բարեմիտ երիտասարդն  
ի պատմել ինձ զառաքինական ձգտունս նորա-  
հաս պատանեկութեան նոր- նախիջևանայ, յոյժ  
ճիշտ բացատրեալ էր զզանազանութիւն որ ի մէջ  
երկուց ընկերութեանց՝ ծաղկելոց ի նախն քաղաքի,  
յորոց մին՝ որ հնագոյն էր՝ կոչուր Բարեգործական  
ընկերութիւն, իսկ երկրորդն որ յետոյ խմբեցաւ  
Մարդասիրական Չառաքումն Մարիամ օրհորդի  
Վարդանեան Հալաճեանց, և զպատրաստութիւն  
այլոց ևս չորեքտասան մանկանց, թէ յարուաց և  
թէ յիգաց յայլ և այլ նմանօրինակ հացալից  
կրթութիւնս, տնօրինեալ է Բարեգործական ըն-  
կերութիւնն և ոչ Մարդասիրական. և սկզբնաւո-  
րութիւնն իսկ այսօրիկ բարեգործական ընկերու-  
թեան եղև արդարև բարեգործական պատճա-  
ռաւ, մինչ ի խորին ձմեռնային ըբբեր փո-  
թորկոց հարիւրաւոր խոճիթք աղքատաց ի հե-  
ռաւոր թաղս քաղաքին՝ թաղովին թաղեցան ընդ  
զրկաչափ թանձրութեամբ ձեանն, և հաղարաւոր  
արք և կանայք, և ծելք և տղայք՝ մնացին յիւ-  
րաբանչիւր տունս որպէս ի փլատակա աւերակաց,  
և յայնմ դառնակակիճ կարօտութեան անօգնա-  
կան չքաւորաց մի էր և սոյն իսկ Պ. Պետրոս  
Քեչէճեանց՝ որ ի միասին ընդ հասակակից պա-  
տանեկաց ձեան ի դործ եղին նպաստ հասուցանել

ձիւնամաղ կենդանւոյն մեռելոց, և յայնմ օրէ հիմնեցաւ այս Բարեգործական ընկերութիւն, որ բաց յայլոց տունին քաջագործութեանց՝ ձեռնառու եղև և Սրբազան Արքեպիսկոպոսին Այվազեան ի տարածել զազգաշահ մատեանս և զտեսրակս իւր յօգուտ բանասիրաց:

Քաջայայտ լինելով զի ազգասէր լրագիրդ ոչ զանց արասցէ զազգասիրական տեղեկութեամբքս Հայազգի երիտասարդաց մերոց, ծանուցանեմ՝ զի և ես յաւուրս յայտօսիկ ունիմ՝ տեղափոխիլ Пеманловскаго полка по 8 и россъ въ д. № 21. յայտմ հետէ այս է իմ հասցէն, Օտերունի յոյժ գօհ վասն առաջին շնորհաց Երարատիդ:

ԳԱՐԲԷԷԷ ՊԱՏԿԱՆԵԱՆ:

ՀԱՇԻԻ ՄԱՐԳԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ  
ՆՈՐ - ՆԱԽԻՋԵՒԱՆԱՅ:

Նոր-Նախիջևանայ ազգօգուտ Մարդասիրական Ընկերութիւն առ Ահհափառ Հայրապետ մեր ուղղած յայտարարութեամբ՝ անցեալ 72 տարւոյն հետեւեալ տարեկան հաշիւը կմատուցանէ, զոր կիւլութեամբ հրատարակել ըստ խնդրանայ նորին:

Մարտի 1872է.

Ըստ Ժե յօդուածոյ Կանոնադրութեան Մարդասիրական Ընկերութեանս Հոգաբարձական Խորհրդարանը պատիւ ունի ներկայացնել Ընդհանուր ժողովոյ անդամոց Ընկերութեանս անցեալ 1872 ամի մտից եւ ելից տարեկան հաշիւը:

Ինչպէս կիրեւի հաշուամատենէ, Ընկերութիւնս 1872 ամի սկիզբն ունէր զըրամագլուխ . . . . . 6987 66

Յընթացս 1872 ամի զոյացեալ են մուտք, որք յանուանէ զրեալ են ի հաշուեմատենին, եւ որք են յետագայք:

Յ200 անդամոց Ընկերութեանս տարեկան բաժանորդակիր . . . . . 1200

85 անդամոց բաժանորդակիր վասն	
1874 ամի . . . . .	48
ի 4 նախանձաւոր անդամոց . . . . .	24
Նուէր ի պարոն Ռոմանովսքէ . . . . .	40
Տոկոսիք պանքական տոմսակաց . . . . .	77 50
ի կառավարչէ սուրբ Խաչի Վանուց անդամոց վասն ծրիավարժ աշակերտաց եւ միաբանից . . . . .	600
Տարեկան թոշակը աշակերտաց . . . . .	1657 50
Արդիւնը գոյացեալը ի պատրաստական դրամագլխոյն . . . . .	608 67
ի մշտնջենաւոր անդամոց ի բարեպաշտունի տիկնոջէ Տիրուհի Շիլթեանէ մի տոմսակ Բ. Ներքին փոխառութեան № 46, Սեր. 12081, ի զին . . . . .	450
Նուէր ի մեծարոյ Գասպարայ Մարկոսեան Փոփովէ ի յիշատակ հոգւոց ծնողաց իւրոց Մարկոսի եւ Սրբուհոյ Փոփովեանց, մի տոմսակ Բ. Ներքին փոխառութեան № 22 Սեր. 13922, ի զին . . . . .	450
ի վաճառմանէ զրենոյ թոշակաւոր աշակերտաց . . . . .	25 5

Բոլոր մտից զումարն է . . . . . 4500 72

Իսկ ընդ ամենն մտից զումարն հանդերձ նախընթաց տարւոյ սկիզբն եղած դրամագլխովն է . . . . . 11488 58

Ծեւի 1872 թուոյ էլ.

Վասն պահպանութեան եւ կառավարութեան ժաժառանգաւորաց դպրոցի

Ռոճիկը ուսուցչաց . . . . .	1144 66
ի սնունդ աշակերտաց եւ միաբանից վանուց . . . . .	4525 44

Վասն հանդերձեղինաց աշակերտաց . . . . . 244 56

Վասն զրենոյ եւ դատական պիտոյից . . . . . 492 25

Վարժք տնտեսի, խոհարարի, լուսցարարի, ծառայից եւ այլ մանր ծախք . . . . . 756 34

Վասն կառավարութեան Խորհրդարանիս Ընկերութեան,

Ռոճիկ գործավարի, վասն տպագրութեան հաշուատետրի ընկերութեանս 1874 ամի եւ այլ ծախք, ընդ ամենն . . . . .	419 65
--	--------

Բոլոր ծախսոց զումարն է . . . . . 5757 60